ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԿՈՏԱՅՔ
ԳՅՈՒՂԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

ՀՏԴ 719
ԳՄԴ 79.0
Կ 294

Հեղինակ **Սամվել Կարապետյան**
Գիտական խմբագիր **Էմմա Աբրահամյան**
Խմբագիր-սրբագրիչ **Հասմիկ Հովհաննիսյան**
Համակարգչային ձևավորող **Արմեն Գևորգյան**
Չափագրությունների հեղինակ **Աշոտ Հակոբյան**

Սամվել Կարապետյան
Կ 294 **Կոտայք գյուղի պատմական հուշարձանները.** / Ս. Կարապետյան.- Եր.: ՀԵՈՒ հիմնադրամ, 2014 - 20 էջ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում սույն գրքույկի հովանավոր հարգարժան Վարդան Հարությունյանին

Հայրենիքն անհուն նվիրումի և ոգեղենության միակ աղբյուրն է, ազգերի գոյությունն իմաստավորած գերակա արժեքը:

Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաչությունն է:

Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ:

Ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բազում մահաբեր խութերով դարերը պատվով են հաղթահարել այն ազգերը, որոնց հայրենաճանաչությունը բյուրեղացել և վերածվել է Հայրենիքի պաշտամունքի, որի պայմաններում հաղթանակն ապահովված է եղել նույնիսկ անկախ ուժերի քանակական անհամաչափությունից:

Ոգեղեն արժեքներով առաջնորդվող և ըստ այդմ ուժեղ, իսկ սրանով էլ պայմանավորված՝ երջանիկ հասարակություն ունենալու համար անքննելի անհրաժեշտություն է, որ նույն հասարակության յուրաքանչյուր մասնիկը լինի հայրենաճանաչ, որն էլ բնականորեն սկիզբ է առնում հարազատ ծննդավայրի ճանաչողությունից:

Հուսով ենք, որ սույն գրքույկն իր համեստ ներդրումը կունենա մեզանում այնքան անհրաժեշտ հայրենաճանաչության խորացման գործի մեջ:

Կեցցե՛ն մեր հայրենաճանաչ հայրենակիցները, փա՛ռք սրբազան Հայրենիքին:

ՀՏԴ 719
ԳՄԴ 79.0

ISBN 978-9939-843-16-2

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2014
© Կարապետյան Սամվել, 2014

ԿՈՏԱՅՔ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Աբովյան քաղաքից 3 կմ արևելք՝ Նորգյուղ և Կապուտան գյուղերի միջակայքում՝ Հատիս լեռան հարավարևմտյան ստորոտին: Ծովի մակերևույթից բարձր է 1437-1492 մ:

Անվանում. մինչև Ի դարի սկզբները ավելի հայտնի էր Բարձաբի (նաև Բարձապի, Բարզաբի, Բարցաբի, Բարձրաբեյ, Պարցաբի) անվամբ: Այնուհետև ավելի գործածական է դառնում Ելղովան (նաև Ելղավան, Ելղովան, Էլքովան) անունը, որն էլ շրջանառվում է մինչև 1965 թ., երբ պաշտոնապես վերանվանվում է Կոտայք:

Պատմություն. գյուղը Բարձապի անվանաձևով գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշվում է 1486 թ. որպես Գեղարդի վանքապատկան բնակավայրերից մեկը. «...Բարձապի գեղն սբ. գեղարդեանս սեփական ժողովուրդ է...»[1]:

Ի թիվս Նորագավիթ, Նորք, Ենգիջե, Տաճարաբակ և Պորտիկ գյուղերի՝ Բարձաբին, դարձյալ որպես Գեղար-

1 **Յովսէփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 359:

Կոտայք գյուղը հարավից (առաջամասում Նորգյուղն է, իսկ հետնամասում՝ Գութանասար լեռը, լուս.՝ Մ. Կարապետյանի, 2014 թ.)

Կոտայք գյուղը հյուսիսից և հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

դավանքին պատկանող գյուղ, հիշվում է նաև 1760-ական թթ.[2]:

Հակառակ գրավոր աղբյուրներից մեզ հասած աղքատիկ տեղեկությունների՝ գյուղի պատմության մասին բավականաչափ առատ նյութ են փոխանցում պատմական հուշարձանները: Համենայն դեպս, որևէ գյուղի համար կարծես անձնագիր ներկայացող գերեզմանոցն այստեղ, օրինակ, հուշում է, որ գյուղը գոյություն է ունեցել առնվազն վաղ միջնադարից (գերեզմանոցի առավել հին մասում պահպանվել է Ե-Է դարերին վերաբերող քառակող կոթողի պատվանդան):

Կոտայքը ծաղկուն բնակավայր է եղել նաև զարգացած միջնադարում (այս շրջանից մեզ են հասել բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր, 1178 թ. գերեզմանական հուշարձանի երեսապատի քար, ինչպես նաև ճարտարա-

2 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Երևան, 2003, էջ 382: Տե՛ս նաև Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, Թիֆլիս, 1894, էջ 804:

պետական կառույցի՝ թերևս եկեղեցու կամ որմնափակ խաչքարի մնացորդներ):

Ի վերջո, գյուղը բազմամարդ էր նաև ուշ միջնադարում, ընդ որում, հատկանշական է, որ Շահ Աբասի՝ 1604 թ. իրականացրած հայերի բռնագաղթից հետո էլ Բարձաբին շարունակում է հարատևել որպես զուտ հայաբնակ գյուղ (առկա են ԺԷ-ԺԸ դարերի արձանագիր տապանաքարեր), իսկ ծնունդով մոտակա կամ հեռավոր այլ բնակավայրերից հանգուցյալների առկայությունը Կոտայքի գերեզմանոցում (ինչպես, օրինակ, գեթռոնեցի, դովրեցի, ծաքեցի) վկայում է, որ, շնորհիվ առաջին հերթին տանուտերերի վարած խոհեմ քաղաքականության, գյուղը կարողացել է զերծ մնալ առօրյա շահատակություններից, որով և բնակության համար նկատվել է որպես ավելի ապահով վայր և դեպի իրեն է ձգել այլևայլ գյուղերից հայազգի բնակիչների:

Բնակչություն. Ներկայիս բնակիչների նախնիների թվում, բնիկներից զատ, կան նաև ժամանակի ընթացքում ինչպես մերձակա գյուղերից (օրինակ՝ Գեթռոն, Դովրի, Ջագ կամ Ծաք)[3], այնպես էլ Պարսկահայքի Մակու և Խոյ գավառներից, Կարնո նահանգի Բայազետ, Վանի նահանգի Արծկե (Աղիլջևազ) գավառներից նաև Բաղեշի նահանգի Բուլանը (Հարք) գավառի Քաքառլու գյուղից, Մուշից և այլ վայրերից փոխադրվածներ[4]:

Ինչ վերաբերում է բնակչության թվաքանակին, ապա, ըստ էության, այդպիսիք երևան են գալիս միայն ռուսական նվաճումներից հետո և մասնավորապես 1831 թ.-ից ի վեր:

Ստորև ներկայացվող վիճակագրական տվյալներից երևում է, որ եթե զանց առնենք առանձին դրվագները, ապա վերջին ավելի քան 180 տարիների ընթացքում գյուղն ընդհանուր առմամբ արձանագրել է բնակչության հարատև աճ.

Կոտայք գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth (2013 թ.) արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստեց Ա. Հակոբյանը, 2014 թ.)

3 Ըստ գյուղի գերեզմանոցում պահպանված տապանագրերի (ավելի մանրամասն տե՛ս սույն գրքի էջ 11):

4 1831 թ. կազմված տեղեկագրի համաձայն՝ բնակիչները, ըստ ծագման, բաշխվել են հետևյալ կերպ. բնիկներ՝ 17 տուն՝ 82 հայ բնակիչ (46 ար. և 36 իգ.), Մակվից փոխադրվածներ՝ 9 տուն՝ 38 հայ բնակիչ (21 ար. և 17 իգ.), Խոյից եկած 1 տուն՝ 6 հայ բնակիչ (1 ար. և 5 իգ.) և Մուշից եկած 4 տուն՝ 24 հայ բնակիչ՝ 13 ար. և 11 իգ. (ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 107-112; գ. 319, թ. 74 շրջ.-78):

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1831[5]	31	81	69	150
1839[6]	29	81	58	139
1842[7]	22			
1869[8]	56			
1873[9]	38			
1891[10]	55			
1893[11]	62			427
1904[12]	76			
1908[13]				479
1909[14]		310	206	516
1914[15]				685
1931[16]	215	492	485	977
1936[17]				862
1937[18]		544	328	872
1939[19]				910
1959[20]				951
1970[21]				1181
1979[22]				1295
2001[23]		798	829	1627
2004[24]				1861
2011[25]		768	790	1558

5 ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 107-112; գ. 319, թ. 74 շրջ.-78:
6 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 10, թ. 5: Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յ.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842, էջ 162:
7 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, թ. 1բ (վկայված է միայն արական սեռի քանակը՝ 67 շունչ):
8 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 42, թ. 3:
9 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3:
10 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8697, թ. 1 շրջ.: Ի դեպ, նույն թվականին վերաբերող մեկ այլ տեղեկագիր արձանագրել է միայն 60 տուն բնակիչ (ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3):
11 **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ 1905, էջ 707: Այլ տեղեկության համաձայն՝ 570 շունչ (Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 114):
12 Памятная книжка Эриванской губернии на 1906 год, отд. III, Эривань, 1905, с. 2.
13 Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 251.
14 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 284: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 3 շրջ.:
15 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, отдел статистический, с. 123.
16 ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգաբնակությունը, Երևան, 1936, էջ 39:
17 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:
18 ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, թ. 43:
19 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:
20 Նույն տեղում:
21 Նույն տեղում:
22 Նույն տեղում:
23 Նույն տեղում:
24 Նույն տեղում:
25 ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 10:

Կոտայք գյուղը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2013 թ.)

Դպրոց. հայտնի է, որ գյուղում եկեղեցական-ծխական առաջին դպրոցը բացվել է 1918/19 ուստարվա ծրագրի շրջանակներում՝ 1919 թ. հունվարի մեկին. «1919 թ. յունվարի 25, Երևանի փոխ-թեմակալ սրբազնագոյն Խորեն եպիսկոպոսին: Կոտայից շրջանի Ելդաւան գիւղի հոգաբարձուներից...: Ելդաւան գիւղի ծխ. դպրոցի հոգաբարձութիւնս յայտնում է..., որ մեր շրջանի գործակալ տէր Զաքարի բարեհաճ կարգադրութեան համաձայն, սոյն թի յունուարի 1-ից բացւած է մեր խնամքին յանձնւած ծխ. դպրոցը, ուր մեր կողմանէ հրաւիրւած է ուսուցչի պաշտոնով պ. Սուրէն Թադէոսեանը, որը ունի Երևանի թեմական դպրոցի VI դասարանի վկայական...:

Շրջանային գործակալ Զաքարիա քահանայ Տէր-Յարութիւնեանց:

Հոգաբարձութիւն՝ Օհանես Մկրտիչեան, Աբրամ Յարութիւնեան, Պօղոս Գրիգորեան, Սարգիս Միրզոյեան»[26]:

26 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 490, թ. 12: Տե՛ս նաև **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 87:

Ենթադրվում է, որ մինչ այս դպրոցի բացումը գյուղի ուսումնատենչ երեխաներն օգտվում էին ավելի վաղ ժամանակներից դպրոցներ ունեցող մերձակա Արամուս և Շահաբ գյուղերի կրթօջախներից:

1924 թ. սեպտեմբերի դրությամբ գյուղաբնակ Կ. Գեղամյանը պայմանագրով «գիւղի դպրոցին յատկացուցած է իր մէկ տունը՝ պարտէզով միայն»[27]:

Ինչպես խորհրդային տարիներին գործել, այնպես էլ ներկայումս գյուղում գործում է միջնակարգ դպրոց:

Պատմական հուշարձաններ. Կոտայք գյուղը բավականաչափ հարուստ է դարերից ավանդված նյութական մշակույթի զանազան հուշարձաններով կամ դրանց մնացորդներով: Սակայն, հակառակ այս իրողությանը, որում, անշուշտ, կհամոզվենք ստորև, դեռևս 1920-ական թվականներին գյուղի պատմական հուշարձանների վերաբերյալ երախտաշատ գիտնական Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը տարօրինակ կերպով նշել է, որ այս գյուղում իբրև թե «Հնութեան մնացորդներ չկան, բացի մի անթուական խաչքարից, գիւղի մօտ եղած բլրի վրայ: Հին մատուռը քանդել են եւ նորը շինել: Գերեզմանատանը մի տափակ քարի վրայ «ՌՃԾԳ» = 1704 թիւը»[28]:

Իրականում գյուղում պահպանված հուշարձանները բազմաթիվ են, որոնք էլ ներկայացնում ենք ստորև:

Սբ. Հովհաննես եկեղեցի. պատմական Բարձաբիում եկեղեցի անվերապահորեն եղել է դեռևս վաղ միջնադարում, սակայն ժամանակի ընթացքում ավերվել է: Հայտնի է, որ 1486 թ. եկեղեցուն է նվիրաբերվում մի Հայսմավուրք. «...Մարգար էրէցն եւ իւր հայրն Զաքարէն գրել տվին եւ ծաղկով զարդարեցին եւ կազմեցին եւ իւրեանցն անջինջ յիշատակ լինի յայսմգետէ Բարձապոյ եկեղեցւոյն, որ հանապազ կարդան ի մէջ ժողովրդեանն...»[29]:

Տակավին 1816 թ. հուլիսին գավառի գյուղերն այցելած Մեսրոպ Թաղիադյանցը վկայում է, որ տեղում քայքայված վիճակում եկեղեցի է եղել. «Երկու ժամու ճանապարհաւ՝ հասաք յաւերակսն Ջագայ՝ հնոյ Կոտէից. յորոյ ի թիկանց է Բարձապի. յորում էին խարխուլք ինչ քարաշէն եկեղեցւոյ»[30]:

Հակառակ վերոնշյալի՝ արդեն 1831 թ. եկեղեցին հիշվում է բավական լավ վիճակում, որը, անկասկած, արդյունք էր իրականացված վերականգնողական աշխատանքների[31]:

Սբ. Հովհաննես անփոփոխ անվամբ եկեղեցին հիշվում է նաև հետագա տարիներին ստեղծված զանազան ուսումնասիրություններում և վավերագրերում (օրինակ՝ 1839[32], 1842[33], 1902[34], 1909 թթ.[35] և այլն):

Արդեն 1863 թ. եկեղեցին այն աստիճան էր խարխլվել, որ բնակիչները դիմում են հոգևոր իշխանություններին նույն տեղում բոլորովին նոր շենք կառուցելու խնդրանքով. «Սբ. Յովհաննէս եկեղեցին գեղջ մերոյ գոլով ի հիմանէ խախտեալ միանգամ, ի չորից որմուց սիւնափակ պահպանեմք ցայսօր ի ներքուստ և արտաքուստ կողմանէ, բայց արդէն տեսանեմք, զի գնալով գնան և առաւել քայքայեն որպէս որմունքն, նոյնպէս և առաստաղն, ուր մուտ գործելն ո՛չ սակաւ երկիւղալի է: Ուստի կամելով մեր նորոգել զյիշեալ եկեղեցին մեր ի նորոյ ի վերայ իսկ հիման վայելուչ և շքեղ դրութեամբ... զամենայն ծախս ի մերոց իսկ սեփհականութեանց ծախելով և յայն պէտս զառձեռն պատրաստի գտանեցեալ դրամս նոյն եկեղեցւոյն մերոյ...»[36]: Վերաշինության նպատակին թույլատրվում է օգտագործել նաև եկեղեցական 40 ռուբ. 90 կոպ. արծաթ գումարը[37]:

Թեև հայտնի չէ շինարարական աշխատանքների սկիզբը, սակայն, ըստ ամենայնի, ԺԹ դարավերջին գյուղացիները կարողանում են այն հաջողությամբ ավարտել:

Այնուհետև տասնամյակներ շարունակ մնում է անխնամ դրության մեջ և բավականաչափ խարխլվում: Օրավուր խորացող քայքայումը կանխելու և գյուղի ծխական միակ եկեղեցին սերունդներին կանգուն վիճակում ժառանգություն թողնելու ազնիվ մղումով և մտահոգությամբ 2007 թ. հայրենի հիշատակներին նախանձախնդիր Վարդան Հարությունյանի ջանքերով իրականացվում է եկեղեցու հիմնանորոգությունը, որի մասին էլ ավանդում է արևմտյան ճակատին զետեղված արձանագրությունը.

Ի հայրապետութեան ն.ս.օ.տ.տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ յառաջնորդութեան տ. Առաքել եպս. Քարամեանի վերանորոգեցաւ Սուրբ Յովհաննէս եկեղեցիս բարեգործութեամբ Վարդան Յարութիւնեանի, ի թուին հայոց ՌՆԾԶ, 2007 թ.:

Սբ. Հովհաննես եկեղեցին ունի ուշ միջնադարում և հատկապես ԺԹ դարում լայն տարածում գտած եռանավ բազիլիկի հորինվածք, որի երկթեք տանիքի ներքո առնված թաղերը հենված են երկու զույգ սյուների վրա (արտաքին չափերն են՝ 20,25 x 12,81 մ): Արևելյան կողմում կիսաշրջան եզրագծով խորանն է, որի երկու կողմերում առկա է ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Մուտքերը երկուսն են՝ բացված արևմտյան և հարավային ճակատներից: Վերջինս բացվում է նույն կողմից կցված կրկնահարկ զանգակատան մեջ: Սրա առա-

27 «Հայաստանի կոչնակ», 1924, № 38, էջ 1207:

28 **Յովսէփեան Գ.**, նշվ. աշխ., էջ 126-127:

29 Նշվ. աշխ., էջ 359-360:

30 **Թաղիադեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. առաջին, Կալկաթա, 1847, էջ 138:

31 ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 110; գ. 319, թ. 76:

32 **Շահխաթունեանց Յ.**, նույն տեղում:

33 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 617, թ. 32:

34 Памятная книжка Эриванской губернии на 1902 год, Эривань, 1902, с. 111.

35 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 3 շրջ.:

36 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4366, թ. 7:

37 Նշվ. գործը, թ. 8:

Սբ. Հովհաննես եկեղեցին հարավ-արևմուտքից, մուտքից վեր ագուցված խաչքարը (ԺԹ դ.) և արևային ժամացույցը զանգակատան հարավային ճակատին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Մանրամասներ Սբ. Հովհաննես եկեղեցուց (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ջին հարկը քառասյուն է, իսկ երկրորդը վեց սյուների վրա կանգնած սրածայր վեղարով ավարտվող ռոտոնդա է:



Սբ. Հովհաննես եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Հարդարանքում աչքի են ընկնում բեմի ճակատին ագուցված ԺԵ-ԺԶ դարերին բնորոշ մի քանի գեղաքանդակ, սակայն մասնատված խաչքարեր: Մի խաչքար էլ, որն ագուցվել է եկեղեցու հարավային մուտքից վեր, ըստ ամենայնի, ժամանակակից է ԺԹ դարի վերջին իրականացված եկեղեցու հիմնավերակառուցմանը:

Հարդարանքի տարրերի շարքում գեղարվեստական առանձնահատուկ գրավչություն ունի զանգակատան հարավային ճակատին զետեղված արևային ժամացույցը:

Եկեղեցում պաշտոնավարած ծխատեր քահանաներից հիշվում են տեր Կիրակոսը (վախճ. 1786 թ.)[38], Բաղդասար Տեր-Մինասյանը (վախճ. 1826 թ.)[39]: 1841 թ. հիշվում է Մինաս Մարտիրոսյանը (ծնվ. 1808 թ., քհն. ձեռն. 1835 թ. մայիսի 15-ին)[40], 1909 թ.՝ Վարդան Տեր-Մինասյանը (ծնվ. 1840 թ., ձեռն. 1866 թ.) և Մովսես Տեր-Վարդանյանցը (ծնվ. 1863 թ., ձեռն. 1899 թ.)[41]:

Ավագ Սբ. Նշան մատուռ-ուխտատեղի. գյուղամիջում գտնվող պաշտամունքային երկրորդ հայտնի կառույցն

Ավագ Սբ. Նշան մատուռը հարավ-արևմուտքից, արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք և առյուծակերպ պահպանիչ խորհրդանիշ քանդակները՝ ագուցված մատուռի արևելյան ճակատին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Ավագ Սբ. Նշան մատուռն է, որը 1910 թ. հիշվում է գավառի առավել հայտնի ութ ուխտատեղիների շարքում. «Սբ. Նշան. հասարակ շէնք է Բարցաբի գիւղի մօտ, ուխտի օրն է Ե կիւրակէին, արդիւնք կունենայ 5-7 ռուբլի, ստանում է տեղական ծխական Վարդան քահանայ Տէր Մինասեանը, նոյն սրբավայրի օգտին գումարը գտնւում է իւր մօտ»[42]:

38 Ըստ տապանագրի (տե՛ս էջ 15):
39 Ըստ տապանագրի (տե՛ս էջ 17):
40 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 25:
41 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 336:

42 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 101, թ. 23 և շրջ.:

Ավագ Սբ. Նշան մատուռը միանավ թաղածածկ պարզ շինություն է՝ ուղղանկյուն խորանով, արևմուտքից բացված միակ մուտքով (արտաքին չափերն են՝ 8,86 x 5,78 մ): Շինարվեստն ու հորինվածքային առանձնահատկությունները հուշում են, որ այս մատուռը նույնպես հիմնավերակառուցվել է ԺԹ դարի վերջին կամ Ի դարի սկզբին, որի ժամանակ որմերում գործածվել են թե՛ հին կառույցին պատկանող երեսապատի քարեր և թե՛ հարդարանքի առանձին տարրեր և խաչքարերի բեկորներ:



Ավագ Սբ. Նշան մատուռի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

Սբ. Սարգիս մատուռ. ներկայումս բնակիչներին անհայտ այս մատռան գոյությունը վկայվել է 1760-ական թթ. Գեղարդ վանքին պատկանող վարելահողերի հիշատակության առթիվ. «Ունի նաև Բարձաբի գյուղում երկու մեծ վարելահողեր, Սուրբ Սարգսի մերձակայքում»[43]: Բացառելի չէ, որ հնամենի Սբ. Սարգիսը ներկայումս գոյություն ունեցող Սբ. Աստվածածին կոչված մատուռի նախկին անվանումը լինի:

Սբ. Աստվածածին մատուռ. գտնվում է գերեզմանոցի հին հատվածի արևելյան եզրին՝ հին ու նոր գերեզմանաքարերով շրջապատված փոքրիկ թմբի վրա:

Ավագ Սբ. Նշան մատուռի նման սա ևս եղել է միանավ թաղածածկ շինություն (արտաքին չափերն են՝ 5,50 x 3,96 մ), սակայն, ինչպես երևում է, նույնպես գրեթե ամբողջությամբ ավերվել է և միայն շատ ժամանակ անց, ըստ կարելվույն, նորոգվել, ընդ որում, երեսապատի քարերի մեջ առկա են ակնհայտորեն հին կառույցին պատ-



Սբ. Աստվածածին մատուռի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.) և խաչքարի բեկոր՝ ագուցված մատուռի արևմտյան ճակատին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Մեղանի վեմ-քարին փոխարինող խաչքար (ԺԵ-ԺԶ դդ.) Ավագ Սբ. Նշան մատուռի խորանի կենտրոնում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Սբ. Աստվածածին մատուռը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

43 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, նշվ. աշխ., էջ 383:

կանող համեմատաբար ավելի խոշոր սրբատաշ քարեր:

Մատռան կիսաշրջան եզրագծով խորանի կենտրոնում կանգնեցված է այս հուշարձանի առավել ուշագրավ և, ըստ էության, կենտրոնական բաղադրիչը՝ երկատված, սակայն խնամքով իրար միացված գեղաքանդակ արձանագիր խաչքար (156 x 85 x 23 սմ):

Կիսաեղծ արձանագրությունը փորագրված է ստորին մասում: Նրանից մի կերպ ընթերցվում է միայն առաջին տողը.

Ի թվոյս ՉԾ(1501), խաչս յաղ|...:

Մարիամ Աստվածածին մատուռ. Մատռանման ևս մի աննշան շինություն էլ առկա է գերեզմանոցի հին հատվածի հարավային եզրին: Այս-

Մարիամ Աստվածածին մատուռը և շուրջը հավաքված գերեզմանական հուշարձանները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

տեղ ավելի ուշագրավը ոչ թե բուն կառույցն է, այլ նրա շուրջ հավաքված գերեզմանական հուշարձանները՝ տապանաքարեր և խաչքարեր (վերջիններս՝ առավելապես բեկորների տեսքով):

Տապանաքարերից մեկն ունի ԺԶ-ԺԷ դդ. բնորոշ գրչությամբ անթվակիր արձանագրություն.

Այս է | հանգիստ | Շահա[ն]|ին...:

Գերեզմանոց. գտնվում է գյուղի հյուսիսային եզրին և զբաղեցնում բավականաչափ ընդարձակ տարածք: Պարունակում է առնվազն վաղ միջնադարից մինչև մեր օրերն իրականացված, իսկ հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ ցարդ իրականացվող հարյուրավոր թաղումներ: Հնավայրում առկա են քառակող կոթողի և խաչքարերի պատվանդաններ, ամբողջական կամ բեկորված բազմաթիվ խաչքարեր, որմնափակ խաչքար, բազմահորինվածք (ուղղանկյունաձև, օրորոցաձև և վրանաձև) տապանաքարեր և թերևս ավերված մեկ այլ որմնափակ խաչքարի կամ մատուռի մաս կազմող ճարտարապետական բեկորներ (սրբա-

Քառակող կոթողի (Թ-Է դդ.) և խաչքարի պատվանդաններ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Հատվածներ գերեզմանոցի հին մասից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

տաշ երեսապատի անկյունաքար, մուտքի կամ լուսամուտի քանդակազարդ ուղիղ և կամարաձև եզրակալներ):

Գերեզմանական հուշարձանների մեջ ճնշող մեծամասնություն են կազմում անարձանագիրները, սակայն նույնիսկ սակավաթիվ արձանագրվածները բավականաչափ լույս են սփռում ոչ միայն ներկայիս Կոտայք գյուղի, այլև շատ առումներով նաև հարևան բնակավայրերի ու մինչև իսկ հեռավոր գավառների պատմության ուսումնասիրության մութ էջերին:

Ճարտարապետական բեկորներ գերեզմանոցի տարածքում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ԺԵ-ԺԸ դարերի տեղահան խաչքարեր և խաչքարերի բեկորներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ԺԵ-ԺԸ դարերի տեղահան խաչքարեր և խաչքարերի բեկորներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ստորև ներկայացնում ենք հնավայրի տարածքից գտնված առավել ուշագրավ բոլոր տապանագրերը:

Երեսապատի արձանագիր քար (67 x 42 սմ). պատկանել է գերեզմանոցի տարածքում գտնված, սակայն հիմնավեր անհայտ մի եկեղեցու, մատուռի կամ էլ որմնափակ խաչքարի, արձանագրությունը՝ 5 տող.

Ի թվ(ին), ես՝ Առաքէլ, ...| աղաւթ(ս) յիշէ:

Ի թու(ին) ՈՒԷ (1178), կանկնեց... | բարեխաւսութիւն Լոյս..., | ով կարդա ...:

Խաչքար. գտնվում է որմնափակ խաչքարին կից, պահպանվել է միայն ստորին կեսը, արձանագրությունը՝ 1 տող.

Թվ(ին) ՌԺԸ (1569):



Տապանաքար. օրորոցաձև, հյուսիսային երեսի արևմտյան ծայրից փշրված, հյուսիսային կողմին երկտող արձանագրված է.

Այս է տապան եւ հանգիստ Տաւր... որդի Մկրտ[իչ]|ին, թվի(ն) ՌՃԽ (1691) ին:

Տապանաքար. օրորոցաձև, արևելյան ծայրից փշրված, հյուսիսային կողմին եռատող արձանագրված է.

Թվի(ն) ՌՃԿԳ (1714), | [այս] է տապան Մարքոսի | [ո]րդի Բալասանին:

Տապանաքար (172 x 48 սմ). ուղղանկյունաձև սալատապան, արձանագրությունը՝ 5 տող.

Այս է տապան Հէր|իքնազին, որ է բա|ժին Մարտիրոսին եւ է մայր հովիւ Ա|դամին, ի ՌՄԼ (1781) թվին:

Տապանաքար (150 x 51 սմ). ուղղանկյունաձև սալատապան, արձանագրությունը՝ 16 տող.

Ներսոյն վիմիս, | որ կայ եղեալ էզ|-վարդանանն աստ | ամփոփեալ, որդի Յար|ու(թ)իւ(ն)ի, ձայնեալ | գեղամացի, զոր կոչ|եցեալ, որ ի գեղջ|էն Ծաքայ եղեալ | եւ է այժմ աստ հանգ|ուցեալ, բազում | որդիք ի եդ թող|եալ, էրէցքն՝ Ով|հաննէս եւ Սարքիս | ձայնեալ, ի ՌՄԼ | եւ Ա (1782) թվին վախ|ճանեալ:

Տապանաքար. ուղղանկյունաձև սալատապան, արձանագրությունը՝ 11 տող.

1786, | է այս շիրիմ | տ(է)ր Կիրակոսի | ծերունազարդ | քահանայի, որ | է որդի Յարու(թ)ի(ւն)ի | եւ է հայր տ(է)ր | Յակոբի, սա էր | գեղջէն Գեթ|ռոնեցի, ի ՌՄ|ԼԵ (1786), վեց(՞) թվին:

Տապանաքար (155 x 52 սմ). ուղղանկյունաձև սալ, երկատված, արձանագրությունը՝ 9 տող.

Այսմիկ արծանս, | որ երեւի իբրեւ նըշ|ան գերեզմանի, գեր|եաց զորդին իմ ցան|կալի զՄնացականն | ...| [կ]սկծալի, ես՝ Դաւ|[իթ, ի գեղ]ճէ դորվեցի, | ի ՌՄԼԶ (1787) թվի(ն):

Տապանաքար. 152 x 53 սմ, արձանագրությունը՝ 9 տող.

Այս է տապան Պօղոսի, | որ է որդի Թամրազի | եւ է հայր Սիմէօնի եւ | Խաչատրի եւ մօրեխ|բայրն Յարութիւնի, ով | հանդ(ի)ք(ո)ղք այսմ շիր|մի, վ(ա)ս(ն) ս(որա)յ տուք ո|ղորմի, ի ՌՄԼԶ (1787) | թվին:



Տապանաքար. արձանագրությունը՝ 2 տող.

Ս(ուր)ք խաչ բար(ե)խ(աւ)ս է Մկրտիչին եւ ծնողին Ա... | Ղուլիճան մանչիկ(՞) կից լինի:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԸ դար:


Պ ԹՈՒՇԿԻ
ԱՐԱՀԱՄ ԱՓՈՍԻ
ԲԴԻԱԼԱՆԻ
0 5 10 15 20 սմ


ԱՅՍԿՏԱՊԱՆ ՀԿՐ
ԻՔԱՆԱՁԻՆ ՈՐԲԱ
ԺԻՆ ՄՐՏԻՐՈՍԻՆ
ԵԿՄԻՐ ՀՈՎԻՒԱ
ՁԻՆ ԻՌՄԿ ԹՒ
0 5 10 15 20 սմ

ԱՅՍԿ ՏԱՊԱՆ ՊՕՂՈՍ
ՈՐՈԴԹԱՄՐԱՁԻ ԵԿԱՅՐՍՄԷՕՆԻ ԵԼԱՀԱՏՐԻԷՄՕՐԵԼ
ԲԱՅՐՆՅԱՌՈՒԻ ՈՎ
ՀՕՁԳԲՈՒՔԱՅՍՄ ՏԻՐ
ՄԻ ՎՄ ԱՅՏՈՒՔՈ
ՂՈՐՄԻ ԻՌՄԿՁ
ԹՒ
0 5 10 15 20 սմ

Տապանաքար. արձանագրությունը՝ 1 տող.

Ս(ուրբ) խաչս բարեխ(աւ)ս Թի...ին:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԸ դար:

Տապանաքար. արձանագրությունը՝ 6 տող.

Այս է տապան Մարիաին, / որ է դուստր Յուսուպին, / սայ է կողակիցն ... / ... / ...:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԸ դար:

Տապանաքար. վրանաձև, վերնամասում և հյուսիսային նիստի արևելյան հատվածում՝ 6 տող.

Այս է տապան Շահնին, սա է դստրորդի / Կարապետ/տին, թու(ի)ն / ՌՄԿԳ (1814)-ին, / նում/քերի Բ (2)-ին:

Տապանաքար. արձանագրությունը՝ 10 տող.

Այս է տապան / {այս է տապան} / Բաղդասար / ք(ա)հ(ա)ն(ա)յ տ(է)ր Մինա/սեան սիրելի, / ողորմի ասէք, / յիշեցէք, յիշեալ / ... ա(ստուծա)յ, / ի թվին ՌՄՀԵ (1826), մարտի ԻԵ (25) / վախճանեցաւ:

1787 թ. դորվեցու (ներկայիս Դովրի գյուղն է) երկատված տապանաքար գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ԺԷ-ԺԸ դարերի տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ԺԹ-Ի դարերի տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Տապանաքար. արձանագրությունը՝ 6 տող.

Ծաղկափթիթի յայսմ շիրմի / մարմին Յովհաննիսի դնի, որդի / է ազնուականի Աբրահամու / Գեղամովի, ով հանդիպօղք, / տուք զողորմի, վաղճանեցաւ / յայսմ թվի՝ 1837:

Ծանոթ. թերևս Գեղամյան (Գեղամով) ազգանունն էին կրում «գեղամեցի» մականվամբ հայտնի Հարությունի շառավիղները:

Տապանաքար. ուղղանկյունաձև, հարավային և հյուսիսային երեսներին տարբեր անձերի հիշատակին՝ 8 տող.

ՌՄՉԱ (1832), նոյեմբերի Ի (20), / ո՞վ անցաւոր, ի յիս հայեա, զգիրս / ընթերցիր, ապա... փառք աշխարհիս / ... // Գրիքորի / որդի Պ... / ... / 1838:

Տապանաքար. արձանագրությունը՝ 5 տող.

Այս է տապան / Խաչատուր Մա/նուկեան, վ(ա)ղճ/անեցաւ 1882 թ(վին):

Տապանաքար. ուղղանկյունաձև, հարավային երեսի արևելյան հատվածը՝ փշրված, արձ.՝ 3 տող.

Ով ազնիւ Մարկոս Գրիգորեան, / անունդ անմահ է քոյիների սրտում, ... / ամաց վախճանեցաւ ի 1894 ամի:

Տապանաքար. ուղղանկյունաձև, հարավային երեսին՝ 5 տող.

Այս է տապան ազնիւ / խմբապետս Եսահի Միրզա(յ)եան, / ի սէրն ազգութեան զոհվեցաւ ի լե/առն Շամիրան, Բարսաբի գի(ւ)ղից, / 1905 թվ(ի)ն, 37 ամի:

Գերեզմանոցի բարձրադիր մասում է գտնվում համանման հուշարձաններից չափերով ակնհայտորեն ավելի փոքր (բարձր. 3,7 մ) որմնափակ մի խաչքար: Դատելով բավականաչափ և միտումնավոր կերպով վնասված խաչքարի ոճական և գեղարվեստական առանձնահատկություններից՝ կառուցվել է ԺԳ դարում: Ցարդ ամբողջական է՝ շնորհիվ 1976 թ. իրականացված նորոգության: Վերջինիս առթիվ փորագրված արձանագրությունն ավանդում է.

Վերանորոգված է 1976 թ. / գյուղի կողմից, / վա(ղպետ) Միշան:



Չիքիան. 1760-ական թթ. մի վկայության համաձայն՝ Բարձաբիում եղել է նաև Գեղարդավանքին պատկանող մի ձիքիան, որը, ցավոք, մեզ չի հասել[43]:

Հուշարձան. Երկրորդ աշխարհամարտին գյուղից մասնակցել է 210 հոգի: Նրանցից 99-ը զոհվել են: 1973 թ., ի հավերժացում վերջիններիս, գյուղի հյուսիսակողմյան բարձրության վրա կառուցվում է հուշարձան:

43 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, նշվ. աշխ., էջ 385:

Որմնափակ խաչքար, ԺԳ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
Ֆանտան
Լուսակերտ
Գութանասար, 2299
Նուռնուս
Ջրաբեր
Սեւ Կատար, 3225
Հատիս
Դիլաքրան
Նոր Գեղի
Կապուտան
Բյուրեղավան
Հատիս, 2529
Զովաշեն
Նոր Հաճն
Արզնի
Ակնասար, 3258
Ակնա լիճ, 3032
Կոտայք
Պողոս-Պետրոս
Սեւաբերդ
ԱԲՈՎՅԱՆ
Ակունք
Պտղնի
Նորքյուղ
Սեւաբերդ
Գետամեջ
Բալահովիտ
Զառ
Կաթնաղբյուր
Քանաքեռավան
Արամուս
Մայակովսկի
Կամարիս
Առինջ
Գեղաշեն
Ազդահակ, 3597
Գետառ
Ջորաղբյուր
Զովք
ԵՐԵՎԱՆ
Ջրվեժ
Ողջաբերդ
Գեղարդ
Գեղադիր
Գեղարդավանք
Գողթ
Հացավան
Գառնի

Յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտքն է ճանաչել հարազատ օրրանը և ուսումնասիրել Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Հայոց Հայրենիքում պատմական հուշարձանները հազարամյակների ընդգրկում ունեն և անհամրելի քանակով ու մեծ խտությամբ տեղաբաշխված են Հայկական ողջ բարձրավանդակում:

Ի տարբերություն բազում ազգերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հայրենի նյութական մշակույթի հուշարձաններին առնչվող ուսումնասիրական տարաբնույթ աշխատանքներ և լուծում նաև դրանց պահպանության խնդիրները, մեր պարագայում նույնն անելու հնարավորությունը հիմնականում սահմանափակված է Հայոց Հայրենիքի՝ սոսկ հայկական պետականության սահմանների ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև որոշ պատմական գաղթավայրերում: Այսինքն՝ պատմական անցքերի բերումով հայ ազգի ներկա սերնդին է ժառանգվել մի իրականություն, որն էապես տարբերվում է շատ ու շատ ազգերի առջև նույն ոլորտում ծառացած խնդիրներից:

Այո՛, հեշտ չէ նախնյաց հիշատակներին հետամուտ լինել մանավանդ ցեղասպանության ճանապարհով Հայրենիքիդ տիրացած օտար պետության տարածքում:

Հայրենիքը, անկախ նրա բռնազավթված կամ ազատագրված լինելու իրողությունից, սրբազան է, որտեղ պատմական հուշարձաններն էլ հավաքական առումով Երկիր մոլորակի տվյալ հատվածը հայ ազգին ի բնե վերապահված լինելու մասին ազդարարող «գրանցման վկայականներ» են, որոնք իրենց իսկ գոյությամբ էլ մատնում են պատմական իրականությունը և դրանով անհանգստություն պատճառում որոշ զավթիչ հարևանների:

Ահա այս ըմբռնումների և պարտականությունների գիտակցման թելադրանքով էր, որ սկսած 1969 թվականից՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը լծվում է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի պատմական հուշարձանների փաստագրման գործին և ժամանակի ընթացքում առաջ մղելով աշխատանքները՝ 1982 թ. Գերմանիայի Ախեն քաղաքում հիմնում «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Տարեցտարի լայնացնելով իրականացվող աշխատանքների ծավալները՝ արդեն 1996 թ. կազմակերպությունը պաշտոնական գրանցում է ստանում ԱՄՆ-ում (Լոս Անջելես), իսկ 1998 թ.՝ նաև Հայաստանի Հանրապետությունում (Երևան): Վերջինս նախ 2000 թ. վերագրանցվում է, իսկ 2010 թ., անփոփոխ պահելով անվանումը, վերակազմավորվում որպես հիմնադրամ:

45-ամյա գործունեության ընթացքում (1969-2014) հիմնադրամն իրականացրել է շուրջ 240 գիտարշավներ դեպի Պատմական Հայաստանի տարբեր շրջաններ, գավառներ և պատմական գաղթավայրեր:

Ստեղծվել է արդեն 400.000 միավորի սահմանագծին մոտեցող թվայնացված պատկերների շտեմարան, որի մաս են կազմում մի քանի հազար չափագրություններ, գրաֆիկական և քարտեզագրական նյութեր:

Ստեղծվել է նաև բնակավայրերի պատմությանն առնչվող տվյալների հատուկ շտեմարան, որն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում հյուսելու Մեծ և Փոքր Հայքերի տարածքում գտնվող ցանկացած բնակավայրի պատմությունը:

ՀՆՈՒ հիմնադրամը, սկսած 1997 թ.-ից, ձեռնամուխ է եղել ավարտված ուսումնասիրությունների հրապարակման գործին, որով և անցած տարիներին լույս են ընծայվել ավելի քան 60 միավոր գրքեր, գրքույկներ, քարտեզներ և տպագիր այլ նյութեր:

2006 թ.-ից ի վեր հիմնադրամը ստեղծում է նաև վավերագրական ֆիլմեր:

Ինչպես հրատարակությունները, այնպես էլ վավերագրական ֆիլմերը զետեղված են համացանցում:

Գրքի ստեղծման և տպագրության հովանավոր
ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

http://www.armenianarchitecture.am http://www.raa.am RAA Armenia raayer@sci.am (37410) 52 15 25

Տպագրված է «Բյուրակն» հրատարակչատանը
ԵՐԵՎԱՆ
ՀՆՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2014